Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամաններով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են վարչության պետը և վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական նպատակն է՝

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում գիտություն-խորհրդատու-ֆերմեր շղթայի արդյունավետ համագործակցության ապահովումը, նորարարությունների ուսումնասիրումը, տեղայնացումը:

6. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) գյուղատնտեսական խորհրդատվական մեթոդների և արդյունավետ գործիքակազմի կիրառության զարգացումը,

2) գյուղատնտեսական խորհրդատվության շղթայի շարունակական զարգացումը,

3) գյուղատնտեսական խորհրդատվության համակարգի կարիքների գնահատումը, ներառյալ հարցաշարերի նախագծումը և տվյալների հավաքագրումը, ըստ վերլուծության արդյունքների՝ քայլերի ձեռնարկումը,

4) անհատական խորհրդատվության մատուցումը՝ բարելավելով շահառուների աշխատանքի արդյունավետությունը և ավելացնելով շահութաբերությունը,

5) գյուղատնտեսական խորհրդատվական արդյունավետ փորձի ցուցադրությունը,

6) գյուղատնտեսությունում նոր տեխնոլոգիաների և նորարարությունների վերաբերյալ իրազեկումը և տեղայնացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են.

1) գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մշակմանը մասնակցությունը և դրա իրականացմանն օժանդակությունը,

2) գյուղատնտեսական խորհրդատվության համակարգի զարգացման առաջնային ուղղությունների նախանշումը և իրականացումը,

3) գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների շարունակական զարգացման համար այլ կառույցների հետ համագործակցությունը,

4) գյուղատնտեսական խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հաջողված փորձի զանգվածային տարածման իրականացումը,

5) տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և

կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ փորձի փոխանակման և վերապատրաստումների կազմակերպման շրջանակներում,

6) գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ նորարարությունների տեղայնացման ուղղությամբ,

7) գյուղատնտեսական գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը՝ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների կազմակերպմամբ գյուղացիական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով,

8) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով, Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը,

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացումը։

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից՝

1) Գյուղատնտեսական խորհրդատվության բաժին,

2) Գյուղատնտեսական նորարարությունների բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Գյուղատնտեսական խորհրդատվության բաժնի գործառույթներն են՝

1) խորհրդատվության համակարգի զարգացման առաջնային ուղղությունների նախանշումը և իրականացումը,
2) խորհրդատվական ծառայությունների շարունակական զարգացման համար այլ կառույցների հետ համագործակցությունը,
3) խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հաջողված փորձի զանգվածային տարածման իրականացումը,
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացումը:

11. Գյուղատնտեսական նորարարությունների բաժնի գործառույթներն են՝

1) տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ փորձի փոխանակման և վերապատրաստումների կազմակերպման շրջանակներում,
2) գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ նորարարությունների տեղայնացման ուղղությամբ,
3) գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը՝ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների կազմակերպմամբ գյուղացիական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով,
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացումը:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: